

ԱՄԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հաւար	12 մր
Տարեկան	6 »
Վեցամսեայ	15 »
Արսասահմանի հաւար տարեկան	8 »
Վեցամսեայ	3 »

Սակարիւսի հաւար	3 »
Տարեկան	4.50 »
Վեցամսեայ	»

Ծանուցում տուա շին երեսին հատուր 40 ս. իսկ վերջին երեսին հատուր 20 սանթրիմ է. երեսին աւելի անգամներու հատուր 20 0/0 զեղչ կըլ լայ:

Վառուսի հաւար ձևի 10 սանթրիմ

ՉԱՐՄԻՆ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՏՆԵՔ ԲԱՂԻՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԻՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Նամակ և գրամ գրկելի
կարգադրութիւնն հաս-
ցեիլն .

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արսասահմանի հաւար
ձևի
(20 ՍԱՆԹՐԻՄ)
Պուշկարիոյ հաւար
ձևի
(15 ՍԱՆԹՐԻՄ)

Գրութիւնք ևս չեն տուիր

«ՇԱՐՄԻՆ»-Ի ԲԱՄԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՄԺԱՆՈՐԴ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴԸ



Վերջապէս ընտրուեցաւ Պուշկարիոյ հայոց առաջնորդը, աննախատեսելի պայքարներէ յետոյ, որոնք մազ մնաց ցաւալի հետեւանքներու իսկ յանգէին, մէկ քանի տեղերու մէջ, առանց մէկ քանի անձերու շրջահայեցութեանը և զգուշաւոր ընթացքին:

Ներսէս եպիսկոպոս Ասլանեան, արդի հայ եկեղեցականութեան ամէնէն հարազատ ու մաքուր, և ամէնէն փնտռուած գէմբերէն մէկը, պիտի գայ բազմիւ պուշկարահայ առաջնորդութեան նորահաստատ աթոռին վրայ. անոր տալու համար շուքը որ կը վայելէ, պատկառանքը որ անհրաժեշտ է, բրէսթիժը որ անոր կանգունութեան և օգտակարութեան միմիակ պայմանը պիտի ըլլայ:

Ըսուեցաւ արդէն թէ այս առաջնորդութիւնը վարդերու վերայ չէ որ կը հանգչի, ընդհակառակը տատանկներու խիտ ցանց մը կը մացառուի անոր շուրջը և ուժգին, հուժճու գաստակ մը հարկաւոր է մէկզի ընելու համար այդ խայթոց, նեղող խոչնդոտները և բանալու համար ճամբան, ուսկից ա՛յ այդ գործը խաղաղօրէն և հեշտօրէն պիտի սահի երթալ գէպ առաջ:

Բոլոր անոնք որ հոգեւին և անսայթաք պայքարեցան մաքրութեան այս գծնդակ գործը տանել յաճնելու համար յարմարագոյն և արժանաւորագոյն ձեռքին, կուշտ ու արժանի գոհունակութիւնն ունին հիմակ առէկ գործ մը կատարած ըլլալու, և գաղութի մը ճակատագիրն աւանդած ըլլալու այնպիսի նկարագրի մը, որ կ'անթեղէ փնտռուած բոլոր յատկութիւնները, փորձառութիւն, անյողդողութիւն, անկեղծութիւն, անշահախնդրութիւն:

Կարծէր որ Պուշկարիոյ առաջնորդը ընտրուէր ոչ թէ ձայ-

նէրու մեծամասնութեամբ, այլ միաբերան հաւանութեամբ. կարծէր որ ամբողջ Պուշկարիոյ հայութիւնը մէկ հոգիի մը պէս մտածէր, զգար ու պոռար. իմ ազգային վարչութեանս զեկը կը վստահիմ մէկ ձեռքի մը, այն է Ասլանեանին. ինչ ալ ըլլայ սակայն, արդիւնքը շնորհաւորելի է և համաձայն նախատեսութեանը ու անկեղծ փափաքներուն այն անձանց, որոնք զայն ձեռք բերելու համար քիչ ջանք չէ որ թափեցին:

Դեռ առարկողներ կան թէ՛ նախ քան առաջնորդին ընտրութիւնը՝ հարկաւոր ու օգտակար էր պատրաստել օրէնադիւմ մը Պուշկարահայ առաջնորդութեան սահմանները, իրաւասութիւնները, վերջապէս վարչական պայմանները որոշող, որպէսզի գործը գիւրացած ըլլար, և աթոռին հաստատումը խնդրանքներու շնորհաւոր: Այս առարկութիւնը բերուած պէս որքան բանաւոր, գործնականապէս սակայն նոյնքան անիրանալի, նոյնքան անհիմն առարկութիւն մըն է. Գծէ ինչ օրէնքներ որ կուզես, եթէ պանոնք գործագրելու ճարտար ու բարեացակամ ձեռքը կը պակսի, անկարելի է ըզձացուած արդիւնքը ձեռք բերել. Բայց եթէ թեմի մը վարչութեան զեկը յանձնուի փորձ ու հզօր ձեռքի մը, որտես ու շրջահայեաց, ան պիտի կրնայ գտնել ուղեգիծը, շաւիղը ուսկից պիտի քալէ իր թեմականներուն պէտքերուն բաւարարութիւն տալու համար:

Ներսէս եպիսկոպոս Ասլանեանի աննկուն նկարագիրը, անշահախնդիր ոգին, և մանաւանդ փորձառութիւնը ամէն բանի պակասը պիտի կրնան լրացնել և զո՞հ ձգել մեր ամէնէն աւելի պահանջկոտները: Եթէ անաշնորդութեան մը կանխահոգ օրէնսգրութիւնը պահանջողներուն իսկական նպատակակէտը ան է որ առաջնորդութիւնը ան-

խախտ հիման մը վրայ հաստատուի և անկէջ սպասուած օգտակարութիւնը ձեռք բերուի, պարտաւոր են ամէն բարոյական և նիւթական աշակցութիւն ընծայել նորընտիր առաջնորդին, փոխանակ ձեռնպահ և զիտող մնալու, և սպասելու որ իրենց գուշակած անպատեհութիւնները առաջ գան: Սակայն զժպհի եսասիրութեան շարժում մը պիտի ըլլար անոնց կողմէ:

Ու բոլոր անոնք որ անձնական հաշիւներու գոհացման հաճոքին համար՝ անհեռատեսօրէն՝ պայքարեցան վիժեցնելու համար մէկ քանի պատգամաւորներ ընտրութիւնը, սրտանց փափաքելով հանդերձ Ասլանեանի առաջնորդ ընտրուելուն, մեր այսօրուան Սօֆիայի թղթակցութիւնը կարողաւ պիտի վերջապէս հասկնան թէ պարօպ անղը չէր որ ատ մարգոց ընտրութեանը համար անտեղիտալի յամառութիւն մը ցոյց տրուեցաւ: Եւ առիկա ըմբռնելու խելացութիւնն ունենալով, հակառակորդ տարրը, իր փափաքած այս արդիւնքին հանդէպ, ուրիշ ընելիք չունի եթէ ոչ մոռնալ ինչորեղաւ, և պատրաստուիլ արժանուոր ըզուներութիւնն ընելու իր անուանի առաջնորդին, յուսախաբ չընելու զայն իր ակնկալութեանցը մէջ և ամէն աշակցութիւն նուիրելու անոր, զլուի հանելու համար գծուարին գործը, որուն ինքզինքը նուիրելու ամէն արժանիք և ամէն պատրաստականութիւն ունի ան:

Շաւարշ

ՊՈՒՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Կ. Պոլիս 24 հոկտ.

Այս անգամ կը փութամ հաղորդել էջմիածնէն հասած նորագոյն լուրերը, որոնք իրաց վիճակը շատ տխուր կը ներկայացնեն, թեւեւ զրոյց կայ նաեւ

թէ հոկտեմբեր 1էն առիւն կացութիւնը թեթեւ մը բարեփոխուած է. Սեպտեմբեր 25ին երկու վաշտ զինուոր կը շրջապատեն էջմիածինը, արգիլելով ամէն արտաքին յարաբերութիւն: Նոյն պահուն պետական յանձնաժողով մը նախազահը ու անդամները կը ներկայանան կաթողիկոսին, պահանջելու որ գանձարանին և միւս գոյքերուն պահուած տեղին բանալիները իրենց յանձնէ: Հայրիկը լացարձակապէս կը մերժէ. ասոր վրայ նոյն անձերը կը յայտնեն թէ հարկադրուած են, ակամայ, կատարել կալիցին իշխանին հրամանը, և կըսկսին բռնական միջոցները, երկաթներով կը խորտակուի գանձարանը, ուր կային վանքապատկան և ուրիշներու պատկանող դրամներ, ճեմարանին դրամագլուխը, ընդամենը 500,000 ռուպլի, ձոյլ ոսկի և արծաթ, չին դրամներ և այլն. ասոնք ինչպէս նաեւ ուրիշ գոյքեր կը լեցնեն կառքերու մէջ և կը տանին Վանքին մէջ ռուպլի մը իսկ չի մնար և պաշարումը կը տեւէ 27 ժամ: Ռուսիոյ ուրիշ քաղաքներու մէջ ալ ցուցակագրութիւններ եղած են, բայց կալուածները գեռ գրաւուած չեն. արտասովոր գրգռում կը տիրէ ժողովրդեան մէջ և այն քահանաները որոնք գրաւման գիւրութիւն կուտան առ ահի՛ կը սպաննուին: Կաթողիկոսը տեսնելով որ վանքին մէջ գրամ չէ մնացեր, իր քով գտնուող թեմական առաջնորդներն ու փոխնորդները կը զրկէ իրենց տեղերը: Ասոնք հասածուն պէս տեղական իշխանութիւններէն հրաման կըստանան ստորագրելու յանձնման գիրը, սակայն անոնք բացարձակապէս կը մերժեն հրահանգիլ և կը յայտարարեն որ հրամանը պէտք է կաթողիկոսէն գայ:

—Այս տեղեկութիւնները Պոլիս հասնելուն, եպիսկոպոսներու ժողով գումարուեցաւ անցեալ երեքշաբթի օր պատրիարքարա-

զի մէջ և որոշուեցաւ գործուած բռնութեան բայց մանուաւնդ Ե. զաթ ճնշումներուն համար յէջ միտառն՝ բողոք ուղղել Չարին .

Գումարման պահուն պալատէն ու դատական նախարարութենէն պաշտօննայ եկաւ խնդրելու որ նիստը տեղի չունենայ . որովհետեւ ուսու դեպքանը այդպէս կր խնդրէ ու կը պնդէ՝ նպխոպոսննրը յայտնեցին . պատրիարքին թէ իրենք իբրեւ միաբան Մայր Աթոռին՝ իրենց պարտքը կը կատարեն և չեն դադարիր կատարելէ . հետեւապէս կը մերժեն հընազանդիլ ամէն միջամտութեան .

Պատրիարքը այս յայտարարութիւնը գնաց հաղորդեց թէ՛ պալատ և թէ՛ դատական նախարարին . Թողորագիրը կը պատրաստուի յառաջիկայ շաբթու . Պոլսոյ մէջ ալ միաքերը գրգռուած են . սակայն թերթերուն արգելուեցաւ այս մասին ու է բան գրել . վասնզի մակեդոնական խնդրին պատճառաւ Գուռը չուզեր որ թրքահայերը Ռուսիան վշտացնեն .

Գերմանական թերթ մը հեռագիր ստացել է Բեթերսպուրկէն թէ ներքին գործոց նախարար Իլէվէ պաշտօնանկ պիտի ըլլայ և անոր պիտի յաջորդէ Վիթէ . որ նախարարութեան մէջ զլիսաւոր ընդգրկմանը էր ուստիայ կալուածներու գրաւման . Այս լուրը չճշողեցու . որովհետեւ Չարը դեռ չաբաթ օրը կը հասնի Բեթերսպուրկ . Այս խնդրին վերաբերմամբ Կաթողիկոսին գիրը ինչպէս նաեւ ուրիշ գրեր Չարին ուղղուած՝ ճարձխատ իրեն զրկուեր են .

—Այս պահուս Երուսաղէմի խնդրի մըն ալ կայ Պոլսոյ մէջ . Վանքին ելեւմտից տեսուչը . Ղեւոնդ Վ. Մաքսուտեան անուն ճարպիկ գող մը 10 տարիէ իվեր ոչ հաշիւ կուտայ ոչ ըրածը կիմացնէ . Ինք 50000 ոսկիէն աւելի հարստութիւն գիւլեր է . մինչդեռ 20,000 ոսկի նոր պարտք մը ունի . Այս աւազ կին հեռուէն գործակիցն է Կէորդ Ե. պիսկոպոս Ելէցեան . որ Պոլսէն ամէն դու կը իրիթէ . և կառավարական շրջանակներու մէջ կամբաստանէ խեղճ իզմիրլեան Սյրազանը . որուն հեռացումը կը պահանջէ հիմա կառավարութիւնը մէկ քանի վարդապետներու հետ . զորս մասնանիշ կընէ Ղեւոնդին խորհրդով Կէորդ Ե. պիսկոպոս . ասոնց մէկ ուրիշ գործակիցն է Ղեւոնդ Ե. պիսկոպոս Երջմանեան Երուսաղէմի մէջ . Երէցեանին կիլիկիոյ կաթողիկոս Ջըւալը բախտ մըն էր ազգին համար . Այս աստիճան շարժի . ստորին և կեղծարար մարդ անկարելի է բրեւակայել . իր բոլոր գոյնը դուրս սուսու . Հիմա կառավարութիւնը միջամտած է

վանքին գործերուն . և Պատրիարքաբանը դիւանապետ Թէլեան էֆեն զրկեց իրաց վիճակը ստուգելու . Թարութիւն պատրիարքը ձերացած ու ինքզինքը կորսնցուցած է . մինչ ասդին միւսները ուղածնին կը խաղան իրրեւ թէ Երուսաղէմի վանքը իրենց ազարակը ըլլար . կամ իրրեւ թէ սակէ առջի 30000 Քրի պարտքը իրենք վճարած ըլլային .

—յսօր Սուլթանին ծննդական տարեդարձին առթիւ կը յուսացուէր կարգ մը բանտարկեալներու ներում . սակայն մեր պատուական պատրիարքը փոխանակ այդ բանը խնդրելու Սուլթանին . ծաւօթ դուստան Ռոպէր էֆ. համար առաջին կարգի օսմ . պատուանշար խնդրեց և ստացաւ . ա՛լ հակցէք գործերուն վիճակը .

Լուրեր

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԹԱԻՐԻՉԵՒՆԵՐԻՆ

Ձեր նեկայ տագնապալից վիճակը տեսնելով սրտիցս արիւն է գնում . փոխանակ նորանոր յառաջադիմութեանց լուրեր աննկով ուրախանալու . ձեր յետադիմութիւնը լսելով արթում և խորին վիշտ եմ գգում .

Եւ քանի դեռ ոստ Պարսկաստանի հողի վրայ է գտնուում . ցանկանում եմ ձեր բարիքի համար վերջին անգամ իննելով ձեզ օգնութեան հասնել . փրկութեան ճանապարհը ցոյց տալով .

Ներկայ խառնակ վիճակից անվնաս պրծելու և սկսած առաջդիմական գործը շարունակելու համար ձեզ միայն մի բան է հարկաւոր իրագործելու . այդ այն է . որ պէտք է Թաւրիզից շատով հեռացնէք ձեր անարժան առաջնորդին՝ Եղիշէ Վ. Մուրաթեանցին . որը այդ բոլոր շարիքներին միակ աղբիւրն և սկզբնապատճառն է .

Գուցէ մեղադրէք ինձ . և մասամբ էլ իրաւունք ունէք . որ զլիսաբասպէս իմ և մեր խմբի պատգամաւորներին ձեռքով ընտրուած առաջնորդին . այսօր հեռացնել եմ ցանկանում . Խոտովանում եմ . որ այն ժամանակ շատ սխալել ու խաբել ենք . թմբուկի ձայնը հեռուից քաղցրալուր լսելով . բայց սխալը խոտովանելը ինքնին մի աղնութիւն է . հետեւաբար դուք ինձ անշուշտ կը ներէք .

Գուցէ շատ լաւ էք իմանում . որ ես անձնական հաշիւները հասարակական շահերի հետ խառնող ու չփոթողներից չեմ . և թէ անձնական հաշիւներից ու կուսակցական կրքերից զրգած չեմ գրում այս սոցիերը . այս մասին ձեզ շատ ապացոյցներ տեւել եմ եթէր տարի Թաւրիզում ապրելով . Առաջնորդի հետ էլ մինչեւ վերջը բարեկամական յարաբերութիւն եմ պահպանել . Ուրեմն . այս բաց նամակը ձեզ ուղղելու միակ յեղապատակս հասարակութեան օգնութիւնն է . հետեւաբար . համոզուելու էք . որ միայն ձեր բարիքն

(*) Միտա Չերազ տուտուին անկանջը խօսի . Ծ. Խ.

եմ ցանկանում . ձեր շահերը պահանջում են . որ դուք էլ ինձ նման խորհրդ և ըստ այնմ գործէք .

Այսօր փակուած են ձեր միակ միութարութիւնը և յայտ եղող Լիւաւայի դպրոցները . եղբայրը եղբոր դէմ է գինել . աղիբաւութիւնների դէմ թողնող ժողովրդին ֆէրրաշներով քաշ են տալիս և կողոպտում . նոյն իսկ ձեր դպրոցներին սուրբ և ն. իրական յարկում ֆէրրաշներ են մտցնում աշակերտներին ձերակալելու առումը . պատակով . միակ անկեղծ . իր կոչման արժանի և անշահախնդիր ուսուցչական խմբին հեռացնելով . նրա սեղ բերել են ուզում պատահական . անարժան և շահախնդիր մարդկանց . Եւ այս բոլորը լինում են Եղիշէի խորհրդով . նրա թելադրութեամբ . իսկ դուք փոխանակ նրան մի լաւ դուստուր . միմիայն գլուխ էք պատռում . միմիայն ջարդում . .

Եղիշէի կրքոտ . վնասակար և ստոր գործերը ձեր առաջ պարզելով հանգեւր . նրա մինչեւ ցարդ յոգուտ Ատրպատականի հայ տարրին արածներն էլ յիշեց ու քննադատեց . Ինչ է արել Եղիշէն . Գրեթէ ոչինչ . .

Գիտեմ . որ դուք ինձ պիտի յիշեցնէք նրա իրեւ լաւ և օգտակար գործերը՝ կենսարական դպրոցի չէնքի գնումը . արագատիպ մամուլը . ազգային կանոնադրութիւնը . Սուլթանի կեցրածական դպրոցի հողին գնումը . Գործը թերթի հյատարակումը և այլն .

Գրեց . Կ. Փ . շահան - Խան
30 Ապրիլ . 1903
Սուլթան
(Շարունակելի)

ՍԱԳՈՒՆԻ ՍՊԱՆՆՈՒՄԸ

Շատ տարիներէ ի ստի Լօնտօնը ցնցող ամենէն ուշագրաւ ոճիրներէն մէկն էր պր . Սաղաթիլէ Սագունի խորհրդաւոր սպանումը . Չոր հայկական յեղափոխական ընկերութեան կեդրոնական յանձնարարներին մէկ հարուստ անդամն էր . իւր ընկերները կը յայտարարեն թէ այս մըն է շարք մը վրէժնորդական եղեւնիւր . զոր ծրագրած է մրցակից հայ ընկերութիւն մը . Մարդասպանը Չալիցի ըլլալ մէջ նմանօրինակ սպանութիւն մը փորձելէն վերջ՝ մինչ . Լօնտօն Սագունիի հետեւած ըլլալ կը թուի նիւ Երթէն հասած լուր մը կը յիշէ 300 հայեր սպաննելու դատարարութիւն մը . Այս ողբերգութեան մէջ կը պարունակուին վէպի մը . քաղաքական ինթրիկներու . վրէժառութեան և խորհրդաւորութեան բոլոր տարրերը . Հանգուցեալին ընկերները զայն իբրեւ մարտիրոս մը կը շատաբարեն .

Երկու շաբթի զիշեր մութին մէջ Սագունին իւր բնակարանին սանդուղին վրայ գնդակահար եղաւ . Իւր մարտնոյն մէջ երեք գնտակներ գտնուեցան . մին՝ կոնակը ծակած էր և երկուքը թոքերուն մէջ թաղուած էին . սորի մըն ալ արմուկին վրայէն սահած էր . Հինգերորդ գնդակ մը սրահին մէջ . Սագունին տան տիկնոջ քովէն վերցուցաւ և վեցերորդ մըն ալ ոստիկաններ վեցարարուածեանին մէջ գտան զոր մարդասպանը փոխած միջոցին տանը կից պարտկի մը մէջ նետեր էր . Թերիշ

նշան մըն ալ թրիպի ձեւով սեւ ու կակուղ գլխարկ մըն է . որ ինկած էր յարձակողին զլիւն երբ նա իր զօրին վրայ կրակ ընելէն վերջ թաց սալահատակին վրայ սահեց էր . Փողոցին մէջ երկու տղաքներ ոճիրն անկանատես եղեր էին և ամարդասպանը չէր համարձակած զլիսարկը վերցնել . Այս կը նշանակէ թէ ոստիկանութիւնը երկու կարեւոր նշաններ ունի իր ձեռքը . զէնքը որ նոր է և ամերիկեան գործատան մը անունը կը կրէ և զլիսարկը . որ թէպէտ բաւական մաշուած է՝ բայց Միացեալ Նահանգներու ապրանք ըլլալ կը կարծուի .

Սագունիի Հայ լեզուաբաններու ֆէլճըմ-Իտայ վեց շաբթիէ ի վեր տեղի ունեցող ժողովէն կը վերադառնար . Երկու ականատեսներ կը պատմեն թէ երեսնագործը կարճահասակ . բարակ կազմով . թանկ սեւ պիտերով և օտարականի երեսոյթով անձ մըն էր . Ամբողջ օրը այդ տեղին մօտերը թափառելը նկատի առնուած էր՝ մանաւանդ որ անձի թամանակ առանց ապաստան փնտռելու երիւսեկող օտարական մը քնակահարկու ու շագործի ին պիտի գրաւէր .

Մանր վերարկու մը հագած էր և իր ձեռքերը դրած դրպաններուն խորը . Կլիսարկը քշիվ մը աչրերուն վրայ քաշուած էր . Երբ Սագունիի վերադարձի ժամը մօտեցաւ՝ անձանոյթ նուսու-Նետ-կրով թիւ 288 գէճ գէրք մը բռնէր մինչեւ որ գործ երեսեցաւ . Տղաքը երկու ժամուան չափ օտարականը դիտեցին և անսան որ Սագունիին եկած պահուն անոր մօտեցաւ որպէս թէ հետը խօսիլ կուզէր . Ասոր վրայ՝ չորս պայթիւն լուեցաւ .

Անձանօթը Սագունիին ետին անցնելով՝ անոր կոնակին կրակ պարպեց երբ նա իր տանը դուռը կը բանար . Սագունին իսկոյն ետին դարձաւ և Եղիշէի պաշտպանելու խուճապին մէջ իր հովանոցը կտորեց . Անմիջապէս ուրիշ հարուած մըն ալ ընդունեց կուշտին . Մտադիր իր գործը ամբողջացնելու՝ մարդասպանը իր ինկակորոս գոհին վրայ երկու հարուած ալ պարպեց . Երկուքին միջեւ բառ մը իսկ փոխանակուած չէր . Չէնքի պայթիւնը տնեցիները իրար անցուցեր էր . տղաքը ու քանի մը դրպաններ ամարդասպանութիւն . պտուղից . Թարձակողին փախուտէն առաջ՝ Տիկին վիւսոյի տան տիկնոջ աղիկը . պատուհանէն անոր նշան առնելը տեսեր էր . սակայն մութին մէջ չէր կարողացած զանազան շարագործին դիմագիրը . Այս կտիլ բոնորով՝ մարդը կաթակի պէս զէպի ԲէթՓօրս դաշտերուն ուղղութեամբ փախաւ և աներեսութեամբ .

Սագունին Տիկին Վինալոյի փեղին թեւերուն մէջ ինկաւ մահաւերձ . Տիկին Վինալոյ՝ յիշելով թէ Սագունին իր գօտիին վրայ լեցուն թէվովէր մը մը և դաշտին մը կը կրկր միտ՝ կարծեց թէ ինքնասպան եղած էր նա .

«Ո՛ր . ո՛ր . ո՛ր» ըսաւ Սագունին տղաքին՝ զետիւր իշալով զվատասիրած և զարկաւ զիս . Ուշաբերու՝ ետ կարճ միջոցներէ վերջ՝ մեռաւ Հալլը-Սթրիթի հիւանդանոցին մէջ .

Բէվոլովէրը և գառլոնը ոստիկանութեան կողմէն իր գրպանէն սնունեցան .

Երկկ զիշեր իմացուեցաւ թէ ոճիրէն առաջ կատարուած գէպերու

մասին յուզիչ պատմութիւն մը կայ, որից մարդասպանութեան շարժառիթները կրնան հասկնալու: Հայ պատուիրակները հաստատուելու կը հաւատան թէ Սազունիին սպանիչը յեղափոխական մրցակից կուսակցութեան մը վարձուած էր: Հինգ ամիս առաջ Սազունիի և իր ընկերներուն ձեռքը կարգ մը գրութիւններ անցան, որոնցմով իմացուցանուեց թէ իր մէկ կամ մէկ քանի գործակիցներուն մասը վճարուած էր: Այս գրութիւնները երկու բանակաւորներու տեղի տուին հայերուն մէջ: Կարգավերջ տուած թեմայի արդէն պատակաւոր լաւագէտները, որ 1902ին գումարուած ժողովի մը մէջ ժամանակաւոր միութեամբ մը վերջացաւ: Հաշուուած երկու կողմերն էին հնչակեանները և Արիւարականները: (Երազարդները)

Այս միութեան վրայ՝ Ամերիկայի մէջ 4000 անգլիական ոսկի հանգանակուած էր ի նպաստ իրենց դատին: Ինչպէս հնչակեանները կը պնդէին թէ վերջը այդ գումարը իր նպատակին չէր գործածուած և արիւարականները զայն իւրացուցած էին: Արիւարականները սաստիկ զայրացան և վրէժխնայութիւն ու խռովեցին Լոնտոնի յանձնախումբին դէմ: Որ «Հնչակի մէջ այս լուրը հրատարակուած էր, նմանօրինակ ամբաստանութիւններ հրատարակուեցան նաեւ Ամերիկայի հայկական թերթներուն մէջ:

Բարեբաղդարար, բայց Լոնտոնի կեդրոնական յանձնախումբին անդամներէն մին «Էքսպրէս» թղթակցին, միացեալ ընկերութիւններուն բոլոր թղթերը մեր ձեռք մնաց և այսպէսով մենք նախապէս իմացանք արիւարականներուն նպատակը, որոնք սպանութիւններու միջոցաւ «Հնչակը» ձեռք ձգելու և ոչնչացնելու կուզէին:

Սիր հարցնէք ինձ թէ՛ Սազունիին ինչո՞ւ սպանուեցաւ: Կը պատասխանեմ՝ սպանուողը մեզմէ ունէ մէկը կամ ամէնքս կրնայինք ըլլալ միայն թէ մարդասպանը չէր կրնար յուսալ այդչափ մալիք մտնելու ու խոյս տալ: Սեպտեմբեր և օգոստոսի ամիսները պատմում, որ ներկայ արարքը բացատրեն: Պատճառի «Երիտասարդ Հայաստան» թերթը յայտարարեց Արիւարականներուն՝ 4000 ոսկի խնդրոյն նաև ունեցած կարգակցութիւնը: Ասոր վրայ թերթին հրատարակչը անցեալ ամիս զարնուեցաւ՝ թէ պէտք ոչ մահացու կերպով:

Շարաթ մը առաջ Աւետիս Նազարէկ, «Հնչակ» հիմնադիրը, Ձուրցերիոյ Քլարանա քաղաքին մէջ զաշոյի հարուածներ ընդունեց, յոյն պատճառով: Այնպէս ամէն կողմէն հիմա Լոնտոնի եւ ամերիկայի պատուիրակները Սազունիին և ընկերակից մը նշանակած էին Ձուրցերիա երթալու և նպարտելի կենաց դէմ եղած փորձին պարագանքը ստուգելու:

Հոն եղած միջոցին՝ Սազունի հիւանդանոցի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Նազար Բէկի հետ, որմէ ընդունեց զայն վերաբերող մարզուն մասին մանրամասն նկարագրութիւն մը: Մենք անձկութեամբ այս տեղեկագրին կը պատկանէինք երբ գրութիւններուն յայտնուած սպանակցութեանը ապացուցին թէ՛ վճարուած էր սպանութիւններու շարք մը: Բնականապէս մեր յանձնախումբին անդամները իրենց կեանքը անապահով զգացին:

Սազունիին ինքը կը հաստատէր այն կարծիքս թէ այս մին էր շատ մը ուրիշ ոճիրներու: Իր հոգեւարքին մէջ իրեն այցելող բարեկամի

մը հետ ունեցած խօսակցութեան մէջ՝ Նազարէկի իր վրայ յարձակողին մասին տուած նկարագրութիւնը ինչով Սազունիի բաւ թէ ինք այդ մարդը անցեալ կիրակի Տիէֆին Նիւհէյլըն գացած պահուն՝ նաև ունէ վրայ տեսած էր: Իր ընկերը և ինք նկատեալ ինք ար այդ անձանովը իրենց հետքերէն չէր հետանար և ոչ շարքու երեւոյթ մը և վարձուք մը ունէր: Սազունի վախ ըլլաւ և խորհելով թէ նա Նազարէկի թշնամին կրնար ըլլալ՝ որոշեց անոր հետ խօսիլ: Յարմար առիթ մը ներկայանալով՝ Սազունիին մտնեցաւ և անոր քանի մը հայերէն բաներ ուղղեց: Մարդը չփոթեցաւ, բայց իր պատրաստամտութիւնը գտնելով՝ միանգամայն պատասխանեց թէ չէր հասկնար գիրքը: Երկրորդ անգամ Սազունիին այդ մարդը տեսեր էր՝ այն վարկեանի: Երբ կոնակէն գնդակ մը ընդունելով՝ ետեւ դարձեր էր: Կըստի թէ Սազունիին Լոնտոնի զաւանջին աստի յարձակումը մը մասին միշտ վախի մէջ էր:

Սազունիին հարուստ մարդ մըն էր բաւ իրեն հարեանակիցներէն մին: Իրրիւ իւրիւրը Բագուի քաղաքի հանքերուն մէջ նա շատ դրամ շահած էր: Ժողով է խորհել, թէ Սազունիին կրնէր հիմա ալ կը բնակի Բագու, տասնեւհինգ օրէն հայրենիք պիտի վերադառնար՝ Լոնտոն տարի մը և աման ամիս կեանք անցունելէն վերջ: Թերեւս իր ոտխնները զայս գիտէին և իրենց վրէժխնայութիւնը փութացուցին:

Սազունիին Ուինչեսթըր քաղաքի մէջ էր: Անոնց որդիներուն մէկուն ուսերէն կը սորվեցնէր և մասնաւորապէս տեղեկներուն սիրոյն համար

խոստացած էր իր լուսանկարը անոնց նուէր տալ: Նա երեսունեւ եօթը տարեկան էր:

Կասկածելի մարդ մը բռնուեցաւ երէկ Հուայթ Չէֆրի մէջ, բայց վերջը ազատ ձգուեցաւ: Ոստիկանութիւնը պատճառ ունի հաւատալու թէ մարդասպանը շուտով պիտի ձերբակալուի: Լոնտոնէն փոխադրուեց ընդ միջոցը երբեք անտեսուած է: «Մաղաքային» ոստիկանութիւնը՝ հոս և արտասահմանի մէջ՝ փնտնուած մարդուն անունը գիտէ:

Սա իբրև «հայ անխնայական» մը նկարագրուած է և պատճառներ կան կարծելու թէ մեղսակիցներու անի: Այս ոճիրը արդիւնք էր հայ յեղափոխականներուն ներքին կոխներուն:

Մարդասպանին մասին արուած պաշտօնական նկարագրութիւնն է՝ կարճատև, թխամորթ, սև և փոքրիկ պիտերով մարդ մը:

Կարծիք մըն ալ կայ թէ նա եկած էր Նիւ Եորքէն, ուր Արիւարականներու կեդրոնը կը գտնուի: Կրնար կը և ընկերները այս ենթադրութեան ի նպաստ կը վկայեն:

Այսօր Քէյմպըրջի մէջ խուզարկութիւն մը տեղի պիտի ունենայ:

Հոկտեմբեր 27 թուականաւ «Էքսպրէս» թղթակցիցը կը հարգէ Նիւ Եորքէն հետեւեւղ լուրը:

Մարդիւ Յովսէփեանի(2) հետ ունեցած մէկ տեսակցութեան մէջ՝ հոս նոր կարգուած հնչակեաններու այդ անգամը սա ահուկ լուրը հարգեց: Կըսէ թէ 300 հնչակեաններ սպանուելու դաւադրութիւն մը երեսուն եւ չորս է:

Ոստիկանութիւնը զեռ Լոնտոն փնտնուած մարդասպանին հետքը գտած չէ:

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(13)

ՆՈՒՆԵՐ Ս. Չ. — ԻՆ
ԳԼՈՒԽ Գ.

Այս յուսահատական լուրերէն մասնաւոր երբ իզմիրլեանին էլ անպատճ կերպով աքտորեցին, որի վրայ ժողովուրդը մեծ յոյս ունէր, մեծ, զօրեղ ցնցումը Պօլսոյ մէջ, լաւ, ոգեւորիչ ազդեցութիւն կուսանայ ժողովրդի վրայ: Վասպուրականում էլ յաջողութիւն է. գիւնակիր խմբերը յաջողի են զինքերը նշանակած տեղերը հասցնել, առանց պատահարի:

—Ինչ ևս ասում, ելեքորական սովի հարկերը ցնցելով պէս տեղիցը վեր ցատկերով, ասաց քոս Պետրոսը: Բայց ինչ են ուզում Պօլսում անել, անսենեմ նամակները:

—Նամակները մօտս չեն: Չեն գրում թէ ինչ պէտք է անեն, զաղտնի են ուղում պահել, փոքր շափազանք զաղտնապահ են: Երեսուն է որ գործի են ձեռնարկել...

Առարկան Շուտեանը արժողի վրայ տեղադրելով:

Շուտեանի կտրուկ պատասխաններին յետոյ կարճ լուր թիւն տրից, փոքրիկ վարդգէսը՝ նկատելով հօր մտածկոտ լուրերը, սկսեց նշանակել, ոսկեփայլ մօրուքի հետ խաղալ և տեսնելով որ հայրը բոլորովն ուշադրութիւն չէ գործնում իր

կատակների վրայ: Բաւական ամուր քաչեց մօրուքից:

—Ու՛ֆ, վարդգէս, չարածնութիւն ևս անու՛մ, գնա մօրդ մօտ, մեղմօրէն յանդիմանեց Պետրոսը երեսակին և ծնկից վար իջեց, սպազառնալով Շուտեանին շարունակեց.

—Երա՛ւի քոյ, Շուտ. զեռ հին լաւ տեսնես ևս մնացել, հաւատաք կարծես երբք չի թուլանում, Լաւ լուրեր են ստացել, հա՛, Եր. Հայաստանի մի խոչոր մասը մոխրակոյտի չէր վերածափծ, երբ Տաճկահայաստանի բնակչութեան զգալի մի մասը հաւի ու ոչխարի պէս չէր մորթված, կամ իր ծննդավայրից, լնչպէս զըժողովրդից, չէր փարած, կրկին լաւ տեղեկութիւններ էին գալիս, ոգևորող, քաջալերող, մարդի կոյրքը ուրախութիւնից և վառ յոյսերից ունեցնող յոյսեր:

Ու վերջը, շատ կարճ ժամանակից յետոյ, սոյն ժողովուրդը, որ ասպատակութեան համար պատրաստ էր հռչակվում, յանկարծ կոտորվեց. կոտորվեց՝ առանց զիմարտութեան փոքրիկ ճիգն իսկ թափելու, Չէ, ես այլեւս չեմ հաւատում այդ լաւ լուրերին: այդպէս կոտորվող ժողովուրդը անկարող է այսպիսի մի կարճ ժամանակում ոգևորող գործեր ստեղծել: Չեմ հաւատում, թէ եւ բողոքողին հրատարակված չեմ, որ հայը ընդունակ լինի, այս սորսափելի հարածներին յետոյ, իսկոյն մի մեծ ապստամբական շարժում ստեղծելու: Իսկ առանց այդպիսի մեծ շարժման, նո-

րից զուրկ բարձրացնել, նորից մի քանի ատրճանակ կամ հրացան կրակել, ու մեր սպանած երկու երեք թուրքի փոխարէն հարիւրներ, հազարներ գոհ տալ ոչ միայն տղայամտութիւն, այլ և խնայութիւն եւ համարում: Ասա՛ղ, մենք կարճում էինք, գոնէ մասամբ, որ Բերլինի զաշնագրութիւնը գոյութիւն ունի: մի քանի յեղափոխական ցնցումներ, ժողովրդի ըմբոստութիւն և իր վիճակի զփոփոխութեան նշաններ — բաւ կը լինին սոյն զաշնագրութեան մէջ հայութեան խոստացված իրազրոյթի տալ, Բայց այսօր այլեւս համոզված ենք որ նոյն զաշնագրի ստեղծողները հայրիս թշնամիներն են, կոտորածներն անհամ գուրթ չը շալտեցին, թէ եւ գիտով օգնութիւն ցուցանել էլ մի մեծ բարեբախտութիւն չէ ազատութեան ծարաւ ունեցող ժողովուրդների համար: Այո, Ազատութիւնը գնվում է արիւնով: Բայց այդ արիւնը միայն ըմբոստացողները չը պէտք է լինի, այլ և ճնչողները: Մենք միայն արիւն թափեցինք, չը կարողացանք թափել մեր ճնչողի արիւնը: Չը կարողացանք թշնամու արիւնը թափել և ազատ չենք կարող լինիլ:

Դժոխային պատուհասների առջեւ, իրոնք տեղի ունեցան հայկական թուրքիոյ նահանգներում, անսարքեւս միայն օտարը, սոյն այնքան էլ զարմանալի չէր ներկայ շահամուտական դարում, բայց անտարբեր մնացնէր և մենք՝ կովկասցիներս: Այնտեղ,

մեզնից հետո մի քանի ժամկան տարածութեան վրայ կոտորում էին մեր եղբայրներին: Իսկ մա՞նք, մենք ըստ պատում էինք որ փախուսականները գան և նրանց օգնենք, մենք բոլորըս, ես, գոնէ, մեր ընկերները: Փախուսականներին էլ օգնել չենք կարողանում: Ինչ արինք մենք նրանց համար, ոչինչ: Եւ ինչո՞ւ, որովհետեւ ուս կառավարութիւն թող չէ տալիս ազատ կերպով հայ թշնամիների համար դրամ հանգանակել: Չգեւի արդարացում, մենք ընկերներ ենք ուղարկում թուրքիա կրակի, սըրի և կախաղանի դէմ կուրծք տալու, իսկ ինքներս վախենում ենք ուս կառավարութեան մեղ տալիք պատվենից որոնց պէտք է արժանանանք մեր թշնամ, թափառական ազգակիցներին օգնելու համար:

(Շարունակելի)

ԹԱՏՐՈՆ

Ուրախութեամբ կը ծանուցանենք որ Տէր Ե. Տիկին Յակոբեան վառնա հասած ըլլալով, վաղուցէ սկսեալ պիտի մասնակցին կանոնադրապէս անատկմատ թատերախմբին ներկայացուցմանը:

Սգահանդէսի նկարագրութիւնը յաջորդիւ:

Վերջը Տէյի էքսփրէս կը յայտնէ որ Հնչակեան կուսակցութեան զատուած է հասուած մը Արփիարահանները և որոնց գործն է կը է անդրական թերթը ներկայ եղբայրաւ սպանութեանը:

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

«Մաթէն» իր նոյնը 1 թիւին մէջ հետեւեալ հետազոտողը կը հրատարակէ Պ. Սագունիի յուղարկաւորութեան մասին:

Լօնտօն, 31 հոկտ. — Լօնտօնի հայ յեղափոխականներու ընկերութեան նախագահ Պ. Սագունիի յո զարկաւորութեանը այսօր տեղի ունեցաւ կէսօրէն ետքը ի Յօրթոյթ — շէլ: Թափօրը կազմուեցաւ ընկերութեան շէնքին առկա ի կամ — Ռայ: Որոշուած ժամէն շատ ատու տնային ընկերութեան խնդրով և քարեկամներու երթեւեկէն: Երաժշտական խումբ մը կը նուագէր Կարիպատի ի պատիւ յորինուած քայլերը մը: Ըրագրաւաճաններ՝ ընկերակազմի հրատարակութեանը և մահազոյրը կը ձայնէին, որոնց վրայ կը կարգադրէր: «Դուն մեկնեցար բայց քու յիշատակը պիտի մնայ յաւիտեան»: Բազմաթիւ օտարազգիներ կը գտնուէին ամբողջ մէջ, և ընկերութեան մէկ քանի անդամներու ըսածին նոյնը, ատենք թուրք գործակալներէն:

Հայ ընկերութեանը խնդրած էր պատկերազարդ թերթերէն լուսանկարներ շանել, որպէսզի թուրք կառավարութեանը չը կարենայ տեղեկութիւններ ունենալ, որոնք կրնային վտանգաւոր ըլլալ իրենցմէ ոմանց:

Դազադին վրայ տասեւեակ ծաղիկապահներ կային, ամէնքն ալ զրկուած Ռուսիոյ, Ասերիայի, Թուրքիոյ, Փոքր — Ասիոյ, Պուլկարիոյ, Պարսկաստանի հայ ընկերութեանց կողմէ: Կերեզմանատան մէջ, Մանչէսթրի հայոց նախորդ հովիւ Տ. Թէթօրոս Ջուզայիցի, կրօնական պաշտօն կը կատարէր, ըստ հայկական ծէսի:

Լօնտօնի ոստիկանութեանը կը շարունակէ իր խուզարկութիւնները մարդասպանը գտնելու համար անպատճառ, վասնզի կը կարծէ թէ Լօնտօն գործածուած ոճիրը մասը կը կազմէ սպանութեանց շարքի մը: Շատ տուներ խուզարկած է գիշերանց, Լօնտօնի օտարաբնակ թաղերուն մէջ:

Պ. Սագունիի բարեկամները բայելիրաց կը յայտարարեն թէ իրենց պետին վրէժը իրենց իսկ ձեռքովը պիտի լուծեն:

ՍՈՍՈՆՈՒԳԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Սօֆիա, 25 Հոկտ. 903

Նախընթաց օր հոս քուսմարուեցաւ Պուլկարիոյ առաջնորդական պատուիրակներու ժողովը՝ ընտրելու համար առաջնորդը: Ներկայ էին ինը աշխարհահայկան պատգամաւորք և երկու կը բռնական: Ներկայ աշխարհահայկան պատգամաւորներն էին: Տիարք՝ տոքթ. Ս. Քիւչիւքեան՝ Սօֆիայէն, տոքթ. Թորոսեան՝ Ռուսոնքէն, Համբարձում հաճի Արթիւրեան՝ Սիւրստրէէն, Նշան Գաբրիէլեան՝ Տոպրիչէն, Սարգիս Սուքիասեան՝ Իսթիմետայէն, Յովհաննէս Աւետիսեան՝ Պուլկարէն, Կարապետ Էղնայեան՝ Ֆրիւլայէն և Տ. Գէորգեան՝ Թաթար — Բազարդէն: Ներկայ կրօնականներն էին Տ. Սարտիրոս քահանայ, Մարտիրոս քահանայ, Վառնայէն, Տ. Պողոսեան քահանայ, Վառնայէն, Սալաբահկան պատգամաւորներէն բացակայ էր Տեառ Բեօսէեան՝ Եսուբայէն, իսկ կրօնականներէն Տ. Խորէն քահանայ Քիւչիւքեան՝ Ռուսոնքէն:

Ժողովին կը նախագահէր պատր. փոխանորդ Տ. Վահան վրդ. Յակոբեան, ատենապետն էր Տեառ Համբարձում հաճի Արթիւրեան, իսկ ատենադպիրը՝ Տ. տոքթ. Ս. Քիւչիւքեան: Առաջին քուէարկութեամբ Ներսէս եպիսկոպոս Ասլանեան շահեցաւ ութը քուէ և Տ. Վահան վարչապետ վեց քուէ, որով Ասլանեան Սրբազան իսկոյն հռչակուեցաւ առաջնորդ Պուլկարիոյ հայոց: Ասլանեանի քուէ տուին Սօֆիայէ, Ռուսոնքէ, Սիւրստրէի, Տոպրիչի, Վառնայի, Իսթիմետայի, Եսուբայի, Եսուբայի և Սալաբահկան պատգամաւորները և Վառնայի կրօնական պատգամաւորը: Մնացածները իրենց քուէն տուին Վահան պարագայետին:

Անցողաբար յիշեմ որ Ասլանեանի ընտրութեան գործին մէջ մեծագոյն դերը խաղացին Գաբրիէլեան եղբայրները, տոքթ. Քիւչիւքեան և տոքթ. Թորոսեան: Ընտրութեան գործողութեանց և արդիւրին մասին տեղեկագիր մը խմբագրուեցաւ ժողովին կողմէ, պատրիարքական փոխանորդը և բոլոր պատգամաւորներն ստորագրեցին զայն ու զրկեցին պատրիարքարան: Վարչապետը ընտրութեան արդիւրքը ուղղակի պատրիարքարան հեռագրեց, իսկ պատգամաւորները պատրիարքարանին միջոցաւ Ասլանեան սրբազանին հեռագրեցին շնորհակալութիւնը իր ընտրութիւնը:

Միեւնոյն ժամանակ պատգամաւորական ժողովը կազմեց հովիւ Եսուբայէն բաղկացեալ մասնախումբ մը, ամէնքն ալ սօֆիայաբնակ, որպէսզի մինչեւ առաջնորդին գալուստը և Սոսիւրանիէյի բացումը՝ ան աշակցի պատր. փոխանորդին և իր ձեռքին մէջ կեդրոնացնէ զանազան քաղաքներէ ուղարկուելիք առաջնորդարանի յատուկ նպատակները:

ՀՆՉԱԿԵԱՆ ՆՈՐ Ե ԲԱՅՐՎԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօնտօնի հայոց թաղին մէջ, որ Սագունի սպանուեցաւ, երեք հայեր Գրիգորեան, Իզմիտեան (՝) և Կարապետեան շարագործէ մը յարձակում կրեցին. առաջին երկուքը անմիջապէս մեռան, Կարապետեան վիրատուեցաւ:

Վարդասպանը տեսնելով, որ չպիտի կրնայ փախչիլ զինքը վրիպէ վիրատուեց, բայց հարուածը մահացու չէր, անմիջապէս հանեց ատճառակը և իր կուրծքին պարպելով անձնասպան եղաւ:

Սպանուողները Պաթմուէն եկած են եղեր, Ոճրագործը Սագունին սպանողն է, այս անգամ պիտի բռնուի և չը ճանչցուելու համար:

Ահա այս մասին Խոնքի հագորդած տեղեկութիւնները:

«Հասկցուեցաւ թէ ով էր երկու հայերն սպանողը, որ ինքն ալ անձնասպան եղաւ իր ձերբակալուելու միջոցին. անունն է Յորկի Եսուբայի, որ լաւ ծանօթ էր Լօնտօնի հայ գաղութին մէջ: Հաստատուած կերեւայ նաեւ թէ ան էր Պ. Սագունին սպանողը: Քաղաքական ոճիրներով լեցուն սոսկալի անցեալ մը ունենալը հաստատուած է: Երկուստեքը (Վերակազմեալներ) զանկա ընտրեցին իր յանդգնութեանը և ձեռքի անվրիպելի ճարտարութեանը համար: Դիպանութեան կենթադրուի թէ մարդասպանը ժամանակաւ վիթրիօլէ եղած էր, վասնզի մարմին վրայ սյրուածքի սպիներ կան:

ՄԱԿԵՆՈՒՆԵՍ

Բ. Դուռը պիտու թեանց դէսպաններու իր տուած պատասխանին մէջ կը մերժէ ընդունել Աւետիոյ և Ռուսիոյ երկու գործակալները: Վիէնայի գիւնազեմները կը կարծեն որ Սուլթանը ի հարկէ ստիպուած տեղի պիտի տայ, սրովհետեւ Աւետիոյ և Ռուսիոյ երեք տրամադրութիւն չունին իրենց առաջարկած ծրագրին մէջ փոփոխութիւններ մտցնել: Սուլթանը զիմն իր նենգ միջոցներուն, ուղեց պետութեանց մէջ անհամաձայնութիւն առաջ բերել, բայց իզուր, ոչ մի պետութիւն նոր ծրագրին հակառակ կարծիք չը յայտնեց: Երեւի Սուլթանը չը յայտնեց զիմադրելով ցոյց տալ կողմէ որ փաթիլահը նախանձանդիր է իսլամներու անբարարի իրաւունքները մինչև վերջ պաշտպանելու, բայց ինչգրին լուծումը կարուած է ոչ

թէ Սուլթանէն, այլ պետութիւններէն, որոնք կուզեն շուտ և անփոփոխ գործադրել տալ նոր ծրագիրը: Սուլթանը հաշիւ թէ համարձակի գիմադրել:

— Աւետիոյ կայսրը 10,000 Ֆր. նուիրած է ի նպաստ Մակեդոնիոյ զապիտակներուն:

ԿՈՎԻՍՍԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Գալիցիոյ վրայ սպանութեան փորձ կատարողները եղած են 3 օտարական հայեր: Մէկը մեռած ատեն յայտնած է որ ինք թիւրքերոյ հպատակ է և Պոլսէն թիւրքիս եկած էր 10 օրէ ի վեր: Երկրորդին անցադիրները պարսկական էին: Կը կարծուի որ ատենք զրկուած են հայ յեղափոխական կազմակերպութեան մը կողմէ:

Գալիցիոյ իր կնոջ և ծառային հետ կառքով գացած միջոցին ահաբեկչները կանգնեցնել տուած են կառքը և հայակեր առաջակին հասուցած են շորս հարուածներ, մէկը զիւնին, երկուքը զէմքին և մէկը ձախ բազկին: Վերջին երեքը բաւական ծանր են, բայց ոչ վտանգաւոր զժբաղաբար:

Ի ՆՊԱՍՏ ԶԵՅՔՈՒՆԻ

Table with 2 columns: Name and Amount. Includes items like 'Երկրորդ ցուցակ հանգանակութեան', 'Կայսրան Սթրալճա Մեծ', 'Գանիլ Միտրիչեան 1,-', etc.

Նախորդ հանգանակութեան գումարը 60, 108,65

Աղօթարատ ազգիս Վաղիսիակ Քահանապետ Օտգորնիկ Մուրադ-Երանոսյն Փատնիչա «Взаимность» Варна